

Արձանագրություն Երկրպագության Վայրերի Համար; Հավելված Ծ

Վերջին Թարմացումները`

7/1/2020. Խնդրում ենք նկատի ունենալ, որ Կալիֆոռնիայի COVID-19 Արդյունաբերական Ոլորտների Ուղեցույցը Երկրպագության Վայրերի և Կրոնական Ծառայությունների և Մշակութային Արարողությունների մատուցողների համար փոփոխվել է: Սեղմեք [այստեղ](#)՝ այն վերանայելու համար:

7/9/20. Տրամադրվում է լրացուցիչ տեղեկատվություն աշխատողների արձակուրդային նպաստների և օդափոխության համակարգի բարեկարգումների վերաբերյալ:

7/16/20. Փոփոխվել է՝ համապատասխանելու Հանրային Առողջապահության Նահանգային Պատասխանատուի 2020թ.-ի, Հունիսի 13-ին թողարկված Հրամանին, որով պահանջվում է փակել Երկրպագության Վայրերի շինությունների ներսի ամբողջ գործունեությունը: Երկրպագության Վայրերի շինությունների ներսում իրականացվող գործունեությունը փակ է հանրության համար: Հասարակական գործունեությունը, ներառյալ՝ ծառայությունները, հարսանիքները և հուղարկավորությունները, կարող են շարունակել իրականացվել Երկրպագության Վայրերի բացօթյա տարածքներում՝ համաձայն այս վերանայված արձանագրության պահանջներին կամ վիրտուալ եղանակով՝ օգտվելով տվյալ կամ մեկ այլ վայրի պայմաններից:

7/17/20. Հավելյալ տեղեկատվություն է տրամադրվում աշխատակիցների և այցելուների դեմքի ծածկոցների և ախտանիշների ստուգումների վերաբերյալ:

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը ձեռք է բերում փուլային մոտեցում՝ գիտության և հանրային առողջապահության փորձագիտական աջակցությամբ՝ երկրպագության վայրերին թույլատրելով ապահով վերաբացվել: Համաձայն Երկրպագության Վայրերի և Կրոնական Ծառայություններ և Մշակութային Արարողություններ մատուցողների համար նախատեսված 2020թ.-ի, Հունիսի 1-ի COVID-19 Կալիֆոռնիայի Արդյունաբերության Ոլորտային և Հանրային Առողջապահության Նահանգային Պատասխանատուի 2020թ.-ի, Հունիսի 13-ի Հրամանի համաձայն՝ արձագանքելու նահանգային մակարդակով COVID-19-ի տարածվածությանը, սույն Արձանագրությունը տրամադրում է ուղեցույց երկրպագության վայրերի, ինչպես նաև կրոնական ծառայությունների և մշակութային արարողություններ մատուցողներին (հավաքականորեն անվանում են «երկրպագության վայրեր»)՝ ստեղծելով ապահով և մաքուր միջավայր աշխատակիցների, պրակտիկանտների, փորձնականների, կամավորների, գիտնականների և բոլոր տեսակի աշխատողների համար (հավաքականորեն անվանում են «անձնակազմ»), ինչպես նաև եկեղեցու անդամների, երկրպագուների, այցելուների և այլ անձանց համար (հավաքականորեն անվանում են «այցելուներ» կամ «եկեղեցականներ»): Բացի Նահանգի Հանրային Առողջապահության Գործակալի կողմից երկրպագության տների համար պարտադրվող պայմաններից, երկրպագության վայրերը պետք է համապատասխանեն նաև Երկրպագության Վայրերի համար սույն Արձանագրությամբ սահմանված պայմաններին:

Խնդրում ենք նկատի ունենալ՝ Սույն Արձանագրությունը երկրպագության վայրերին չի պարտավորեցնում վերսկսել որևէ անձնական գործունեություն: Բացի այդ՝ խստորեն առաջարկվում է, որ երկրպագության վայրերը շարունակեն հեշտացնել հեռավոր ծառայությունները և հարակից այլ գործողությունները COVID19- ի համար խոցելի անձանց համար՝ ներառյալ տարեցների և համահունչ հիվանդություններ ունեցող անձինք:

Սույն Արձանագրությունը նախատեսված չէ սննդի պատրաստման և սպասարկման, ինչպես նաև կարիքավոր անձանց համար իրերի առաքման, երեխաների խնամքի և ցերեկային խնամքի ծառայությունների, դպրոցական և կրթական գործունեություն իրականացնողների, տնային խնամքի, խորհրդատվության, գրասենյակային աշխատանքների և այլ գործունեության համար, որոնք երկրպագության վայրերը և կազմակերպությունները կարող են տրամադրել:

Սույն Արձանագրությունը կարող է թարմացվել, քանի որ լրացուցիչ տեղեկությունները և ռեսուրսները հասանելի են դառնում, այնպես որ այս փաստաթղթի ցանկացած թարմացում բաց չթողնելու համար պարբերաբար ստուգեք Լոս Անջելես Շրջանի վեբ կայքը՝ <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/>: Նկատի ունեցե՛ք նաև, որ Կալիֆոռնիայի Հանրային Առողջապահության Վարչությունը կանցկացնի վերանայում՝ գնահատելու Նահանգի Կարգի և այս արձանագրությունների ազդեցությունը Նահանգի Հանրային Առողջապահության Պատասխանատուի Հրամանի օրվանից 21 օր հետո:

Այս ստուգաթերթը ներառում է՝

- (1) Անձնակազմի առողջությունը պաշտպանելու համար աշխատավայրի քաղաքականությունն ու գործելակերպը
- (2) Ֆիզիկական հեռավորությունն ապահովելու համար իրականացվող միջոցառումներ
- (3) Վարակի վերահսկումը ապահովելու համար իրականացվող միջոցառումներ
- (4) Հաղորդակցությունն անձնակազմի, այցելուների և անդամների հետ
- (5) Կարևորագույն ծառայություններին անաչառ հասանելիություն ապահովելու համար իրականացվող միջոցառումներ:

Այս հինգ հիմնական ոլորտները պետք է կիրառվեն, քանի որ ձեր հաստատությունը իրականացնում է իր Երկրպագության Վայրերի Արձանագրությունները:

Սույն ուղեցույցում ընդգրկվող բոլոր հաստատությունները պետք է իրականացնեն ստորև նշված բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրելու, թե ինչու չիրականացված որևէ միջոցառում կիրառելի չէ տվյալ տեղանքի համար:

Երկրպագության վայրի անվանումը՝ _____

Հաստատության Հասցեն՝ _____

Առավելագույն զբաղվածություն՝ ըստ
ՀՐԴԵՀԱՅԻՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ _____

Այցելուների և եկեղեցականների
կողմից օգտագործվող մոտավոր
ընդհանուր քառակուսի ոտնաչափ
Տարածքը`

Հաջորդ արձանագրություններում «անձնակազմ» տերմինը կոչված է ներառելու աշխատակիցներին, կամավորներին, պրակտիկանտներին և փորձնականներին, գիտնականներին և բոլոր այն անհատներին, ովքեր տեղում աշխատանքներ են իրականացնում: «Այցելուներ» տերմինը ներառում է եկեղեցականներին, երկրպագուներին և հանրության այն անդամներին, ովքեր տեղում գտնվում են որպես այցելուներ: «Տեղանք» և «երկրպագության տուն» տերմինները վերաբերում են այն շենքին, որտեղ տեղի է ունենում երկրպագությունը, ինչպես նաև ցանկացած հարակից շենքերին կամ բացօթյա տարածքներին, որոնցում կատարվում են եկեղեցականներին թույլատրված գործողությունները:

Ա. ԱՇԽԱՏԱԿՑԻ (ԱՆՁՆԱԿԱԶՄԻ) ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ (ՆՇԵՔ ԱՅՆ ԲՈԼՈՐԸ, ՈՐՈՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆԸ)

- Անձնակազմի անդամներին, ովքեր կարող են տանը կատարել իրենց աշխատանքային պարտականությունները, կարգադրվել է ադպես անել:
- Խոցելի անձնակազմին, (65 տարեկանից բարձր անձինք, այն անձինք, ովքեր քրոնիկ առողջության խնդիրներ ունեն) հնարավորության դեպքում, նշանակել այնպիսի աշխատանք, որը հնարավոր է կատարել տնից:
- Ամբողջ անձնակազմին ասվել է, որպեսզի չզան աշխատանքի, եթե հիվանդ են և ինքնամեկուսացման համար հետևեն DPH-ի (Հանրային Առողջապահության Վարչություն) ուղեցույցներին, եթե կիրառելի է:
- Տեղեկատվություն գործատուի կամ կառավարության կողմից հովանավորվող բացակայության նպաստների մասին, որոնք աշխատակիցը միզուցե իրավունք ունենա ստանալու, որը ֆինանսապես կհեշտացնի տանը մնալը: Տես հավելյալ տեղեկություններ` հիվանդության հետևանքով բացակայությունների աջակցության պետական [ծրագրերի](#) և COVID19-ի հետ կապված աշխատակիցների փոխհատուցումների վերաբերյալ, ներառյալ` աշխատողների հիվանդության հետևանքով բացակայությունների իրավունքները համաձայն [Ընտանիքների Կողմից Կորոնավիրուսի Առաջին Արձագանքի Ակտի](#) և աշխատողների փոխհատուցման նպաստների իրավունքները և COVID-19-ի աշխատանքի հետ կապված կանխավարկածը` համաձայն Նահանգապետի [N-62-20 Գործադիր Հրամանի](#):
- Աշխատանքային գործընթացները հնարավորության սահմաններում վերաձևակերպվում են` աշխատակազմի տնից աշխատելու հնարավորությունների մեծացման համար:
- Տեղեկացվելով, որ մեկ կամ մի քանի աշխատակիցների/պրակտիկանտների, անկախ վարձու աշխատողների և ժամանակավոր աշխատողների թեստի արդյունքը դրական է, կամ նրանք ունեն COVID-19-ի ախտանիշների նման ախտանիշներ (հիվանդ), գործատուն պետք է ունենա պատրաստի ծրագիր` որով «հիվանդ(ներ)ը» կմեկուսանան տանը, ինչպես նաև պահանջի, որ բոլոր աշխատակիցները, որոնք աշխատավայրում շփվել են «հիվանդի» հետ, անմիջապես ինքնակարանտինի ենթարկվեն: Գործատուի ծրագիրը պետք է ներառի արձանագրություն, որով կարանտինի մեջ գտնվող բոլոր աշխատակիցները կթեստավորվեն կամ նրանց հասանելի կլինի

COVID-19-ի թեստավորումը՝ պարզելու, թե արդյոք աշխատավայրում եղել են շփման լրացուցիչ դեպքեր, որոնք կարող են պահանջել COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ: Տես՝ [Հանրային Առողջապահության ուղեցույցը Աշխատավայրում COVID-19-ին արձագանքելու վերաբերյալ:](#)

- Իրականացվում է աշխատակիցների ստուգումներ՝ նախքան աշխատակիցներին կթույլատրվի աշխատավայր մտնել: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցի դիտարկում, ինչպես նաև հարցում, թե արդյոք աշխատակիցը նախորդ 14 օրվա ընթացքում շփվել է COVID-19-ով վարակված մարդու հետ: Այս ստուգումները կարող են կատարվել հեռավար կարգով կամ անհատապես՝ աշխատակցի ժամանելուն պես: Հնարավորության դեպքում աշխատավայրում պետք է կատարվի ջերմաչափում:
- Աշխատավայրում 14 օրվա ընթացքում 3 կամ ավելի դեպքերի հաստատման դեպքում (ներառյալ վարակի դեպքերը անձնակազմի և/կամ այլ անդամների շրջանակում), գործատուն պետք է տեղեկացնի այդ մի շարք դեպքերի մասին Հանրային Առողջապահության Վարչությանը հետևյալ հեռախոսահամարներով՝ (888) 397-3993 կամ (213) 240-7821: Եթե աշխատավայրում հայտնաբերվեն մի շարք դեպքեր, Հանրային Առողջապահության Վարչությունը կարձագանքի այդ մի շարք դեպքերին, որը կներառի վարակի վերահսկման ուղեցույցի և հանձնարարականների տրամադրում, տեխնիկական աջակցություն և աշխատավայրին հատուկ վերահսկման միջոցառումներ: Հանրային Առողջապահության գործերի կառավարչին կհանձնարարվի տվյալ մի շարք դեպքերի ուսումնասիրությունը, որպեսզի նա օգնի և ուղղություն ցույց տա հաստատությանը:
- Աշխատակիցներին, ովքեր շփվում են ուրիշների հետ, անվճար տրամադրվում են համապատասխան դեմքի ծածկոցներ, որոնք ծածկում են քիթը և բերանը: Աշխատակիցը պետք է աշխատանքային օրվա ամբողջ ընթացքում կրի դեմքի ծածկոցը, երբ շփվում է կամ հավանական է, որ կշփվի ուրիշների հետ: Աշխատակիցները, ում բուժաշխատողները հանձնարարել են չկրել դեմքի ծածկոցներ, պետք է կրեն ներքևի եզրին շղարշ ունեցող դեմքի վահաններ, որպեսզի համապատասխանեն Նահանգային պահանջների պայմաններին, եթե միայն նրանց վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են այն տեսակի շղարշները, որոնք մարմնի ձև են ստանում կզակի տակ: Միակողմանի փականներ ունեցող դիմակները չպետք է կիրառվեն: Աշխատակիցները կարիք չունեն դեմքի ծածկոցներ կրել, երբ մենակ են անձնական գրասենյակում կամ ամուր միջնապատերով առանձնացված աշխատախցում, որի միջնապատերի բարձրությունը գերազանցում է աշխատակցի հասակը կանգնած ժամանակ:
- Աշխատակիցներին հանձնարարվում է ամեն օր լվանալ կամ փոխարինել իրենց դեմքի ծածկոցները:
 - Տրամադրվում են համապատասխան անձնական պաշտպանիչ պարագաներ՝ ներառյալ աչքի պաշտպանության միջոցներ և ձեռնոցներ՝ անձնակազմի այն անդամներին, որոնք պատասխանատու են կրոնական հագուստը և սպիտակեղենը, նստատեղը կամ հատակի ծածկույթները կամ ծառայության կամ արարողակարգերի ընթացքում օգտագործվող կտորեղենը լվանալու համար:
 - Աշխատակիցներին հանձնարարվում է ամեն օր լվանալ իրենց դեմքի կտորե ծածկոցները:
 - Բոլոր աշխատանքային տարածքները առանձնացված են առնվազն 6 ոտնաչափ հեռավորությամբ կամ միջնապատերով:
 - Ընդհանուր տարածքները, ներառյալ պետքարանները և միայն անձնակազմի կողմից օգտագործվող տարածքները հաճախ ախտահանվում են՝ հետևյալ ժամանակացույցով՝
 - Մուտքի տարածք/

նախասրահ

- Միջանցքներ _____
- Հանդիպումների
Սենյակներ _____
- Ընդհանուր
աշխատանքային
տարածքներ _____
- Ընդմիջման սենյակներ _____
- Սանդուղքներ/
Աստիճանավանդակներ _____
- Վերելակներ _____
- Սանհանգույցներ _____
- Այլ _____

- Աշխատակիցներին արգելվում է ուտել կամ խմել հաստատության ներսում ճաշելու համար նախատեսված վայրերից բացի ցանկացած այլ վայրում՝ վստահ լինելու համար, որ նրանք դիմակները կրում են հետևողականորեն և ճիշտ:
- Ախտահանող և նմանատիպ միջոցները անձնակազմի համար հասանելի են հետևյալ վայրում (վայրերում)՝

- COVID-19- ի դեմ արդյունավետ ձեռքի ախտահանիչ միջոցը հասանելի է բոլոր աշխատակիցների համար հետևյալ վայրում (վայրերում)՝

- Անձնակազմին թույլատրվում են հաճախակի ընդմիջումներ՝ ձեռքերը լվանալու համար:
- Անձնակազմին հանձնարարվել է չկատարել տնային այցեր՝ կամ տեղանքից դուրս այլ այցելություններ՝ որևէ մեկին, ում COVID-19-ի թեստը դրական է եղել կամ տվյալ անձի մոտ եղել են COVID-19 ախտանիշներ, քանի դեռ տվյալ անձի մոտ չի լրացել սահմանված ինքնամեկուսացման կամ ինքնակարանտինացման ժամանակահատվածը:
- Սույն արձանագրության պատճենն փոխանցվել է անձնակազմի յուրաքանչյուր անդամին:
- Անձնակազմի յուրաքանչյուր անդամին տրվում են իր անձնական պարագաները, գործիքները և սահմանված աշխատանքային տարածքը: Պարագաների համատեղ օգտագործումը հասցվում է նվազագույնի կամ վերացվում է:
- Սույն ցուցակում նկարագրված բոլոր քաղաքականությունները, բացի աշխատանքի պայմաններին վերաբերող քաղաքականություններից, կիրառվում են առաքում իրականացնող անձնակազմի և ցանկացած այլ ընկերությունների նկատմամբ, որոնք կարող են այդ տարածքում գտնվել որպես երրորդ կողմ:
- Ընտրովի - Նկարագրեք այլ միջոցառումները՝

Բ. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Պաշտանմունքի վայրերում շինությունների ներսում իրականացվող կրոնական ծառայությունները և մշակութային արարողությունները արգելվում են մինչև Հանրային Առողջապահության Նահանգային Պատասխանատուի կողմից հետագա ծանուցման: Այլընտրանքային տարբերակները կարող են օգտագործվել հասարակական կրոնական ծառայությունների և մշակութային միջոցառումների համար: Այդ տարբերակներն են.
 - Ծառայությունները և միջոցառումները իրականացվում են բացօթյա պայմաններում՝ համապատասխանելով վարակի վերահսկման և ֆիզիկական հեռավորության պահպանման պահանջներին:
 - Ծառայությունները և միջոցառումները իրականացվում են վիրտուալ եղանակով՝ կենդանի հեռարձակմամբ կամ ձայնգարվելով՝ հետագայում դիտելու համար:
 - Նկատի ունեցեք, որ պաշտանմունքի վայրերի շինությունների ներսի տարածքը կարող է օգտագործվել, որպես վիրտուալ իրականացվող ծառայությունների և միջոցառումների վայր՝ պայմանով, որ պահպանվում են վարակի վերահսկման և ֆիզիկական հեռավորության պահպանման պահանջները և ոչ ավելի, քան 10 անձ մասնակցում են արտադրման և հեռարձակման գործընթացին:
- Շինության ներսում գտնվող տարածքի օգտագործումը այլապես սահմանափակվում է անձնակազմով, ովքեր չեն իրականացնում հասարակական կամ վիրտուալ գործունեություն:
- Միջոցառումներ են կիրառվել՝ խրախուսելու ֆիզիկական հեռավորության պահպանումը բացօթյա միջոցառումների ժամանակ:
 - Միջոցառումներ են կիրառվել (նախնական գրանցում կատարելը, մուտքի մոտ մասնակիցների հաշվում)՝ ապահովելու համար, որ մասնակիցների թիվը չգերազանցի մարդկանց այն թվին, որը հնարավոր է տեղավորել բացօթյա միջոցառումների ժամանակ՝ պահպանելով ֆիզիկական հեռավորությունը:
 - Մեքենաների կայանատեղիները վերաձևավորվել են՝ սահմանափակելու հավաքների կետերը և ապահովելու պատշաճ տարածություն (օրինակ՝ փակելով յուրաքանչյուր այլ տարածություն):
 - Եթե առաջարկվում են առանց մեքենան լքելու ծառայություններ, ապա մեքենաները ուղղորդվում են կայանատեղի իրարից առնվազն 6 ոտնաչափ հեռավորության պահպանմամբ:
 - Ստեղծվել են հստակ ճանապարհներ՝ ավտոկայանատեղիի և ժամանման այլ վայրերի և միջոցառման վայրի միջև, որտեղ իրականացվում է կրոնական ծառայությունը կամ մշակութային արարողությունը, որպեսզի նվազեցվի մարդկանց կուտակումները, հնարավոր լինի վերահսկել տարողությունը և տեղ թողնել անձնակազմի և այցելուների ներս մտնելու ժամանակ ախտանիշների ստուգման համար:
 - Անձնակազմի անդամը (կամ անդամները, եթե կա մեկից ավելի ճանապարհ), ով կրում է դեմքի կտորե ծածկոց, կանգնում է ճանապարհի սկզբին, բայց ժամանող կամ հեռացող մոտակա անձից առնվազն 6 ոտնաչափ հեռավորությամբ՝ վերահսկելու դեմքի ծածկոցների օգտագործումը և հետևելու տեղավորելիությանը:
 - Թույլատրված կրոնական միջոցառումները և մշակութային արարողությունները

նախատեսված են, որպեսզի թույլատրեն անհրաժեշտ 6 ոտնաչափ տարածություն
ցանկացած 2 մարդու միջև:

- Միակ բացառություն են կազմում այն երկու անհատները, ովքեր հանդիսանում են ամուսնացող զույգ և մեկ ընտանիքի անդամները, ովքեր կարող են մասնակցել միջոցառմանը միասին և նստել միասին՝ որպես մեկ միություն, եթե դա թույլատրվում է ըստ իրենց կրոնի:
 - Եթե միջոցառումների մասնակիցները նախքան նստելը է պետք է սպասեն շարքում կամ տարածքում գտնվելու որևէ այլ պահի, ապա գծանշաններ են կիրառվում՝ անհատների միջև անհրաժեշտ 6 ոտնաչափ հեռավորությունը ցուցադրելու համար:
 - Ծառայությունների և տոնակատարությունների տևողությունը կրճատվում է՝ տեղում անցկացվող ժամանակը սահմանափակելու համար:
 - Բացօթյա տարածքները ձևափոխվել են, որպեսզի հնարավոր լինի ֆիզիկական հեռավորություն պահպանել: Եթե օգտագործվում են այթոռներ, նստարաններ կամ կանգնելու տեղեր, կիրառվում են նշումներ կամ այլ միջոցներ՝ թույլ տալու 6 ոտնաչափ հեռավորություն անհատների միջև կամ ընտանեկան տնտեսության խմբերի և ուրիշ ընտանեկան տնտեսության խմբերի կամ անհատների միջև:
 - Եթե կիրառելի է, բացօթյա միջոցառման համար օգտագործվող տարածքի միջանցքները ձևավորվում են միակողմանի՝ օժանդակելու ֆիզիկական հեռավորության ապահովմանը:
 - Ամբիոնները, հարթակները և խոսնակների այլ տարածքները ձևափոխվել են՝ ապահովելով առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն խոսնակների կամ տոնակատարների միջև:
 - Հաստատության բոլոր վայրերում անձնակազմին հանձնարարված է միմյանցից պահպանել առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն:
 - Վիրտուալ հասանելիության տարբերակն առաջարկվում է այն այցելուներին, ովքեր ցանկանում են մասնակցել ծառայություններին կամ միջոցառումներին, բայց գտնվում են մեծ վտանգի տակ, եթե վարակվեն COVID-19-ով:
- Միջոցառումներ են իրականացվել, որպեսզի պետքարաններն ապահով կերպով հասանելի լինեն բացօթյա միջոցառումների մասնակիցներին: Միջոցառման վայրը կարող է շարժական բացօթյա պետքարան և ձեռքերի լվացման կայան տրամադրել, և/կամ թույլատրել օգտվել շինության ներսի պետքարաններից: Եթե շինության ներսի սանհանգույցները մատչելի են դառնում, իրականացվում են հետևյալ նախազգուշական միջոցառումները.
- Սահմանված ճանապարհը գծանշվել է՝ միջոցառման համար կիրառվող բացօթյա տարածքից մինչև շինության ներսի պետքարանները:
 - Կանոն ժապավեն կամ այլ նշումներ են օգտագործվում՝ ապահովելու ֆիզիկական հեռավորությունը, եթե ներկաները պետք է շարք կանգնեն պետքարաններից օգտվելու համար:
 - Ներկաներին խորհուրդ է տրվում ծառայության ընթացքում ըստ պահանջի օգտվել պետքարաններից, որպեսզի վերջում կուտակումներ չլինեն:
 - Պետքարանները լավ աշխատանքային վիճակում են և հազեցած են բավարար քանակի օճառով և մեկանգամյա օգտագործման սրբիչներով՝ թույլ տալու ձեռքերը հաճախակի լվանալը:
 - Պետքարանները ձևափոխվել են՝ թույլ տալու պատերով առանձնացված խցերից դուրս ֆիզիկական հեռավորության պահպանում:
 - Անձնակազմի անդամը (կամ անդամները, եթե կա մեկից ավելի պետքարան շինության ներսում), ով կրում է դեմքի կտորե ծածկոց, կանգնում է պետքարանի մուտքի մոտ, բայց ժամանող կամ

հեռացող մոտակա անձից առնվազն 6 ոտնաչափ հեռավորությամբ՝ վերահսկելու դեմքի ծածկոցների օգտագործումը և հետևելու տեղավորելիությանը:

- Անձնակազմին հրահանգվել է տարածքի բոլոր վայրերում միմյանցից առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն պահպանել, ներառյալ՝ շինության ներսում գտնվող տարածքներում:
- Եթե կիրառելի է, վերելակի կարողությունը սահմանափակվում է 4 կամ ավելի քիչ անձով, ցանկացած վերելակի համար, որը թույլ չի տալիս վերելակում գտնվող անձանց միջև 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորության պահպանումը: Վերելակում գտնվող բոլոր ուղևորներից պահանջվում է կրել դեմքի կտորե ծածկոցներ: Հաշվի առեք վերելակի չափերը, շենքի հարկերի քանակը և աշխատողների ամենօրյա քանակը՝ վերելակների ներսում անձանց միջև ֆիզիկական հեռավորության սահմանման ուղեցույց կազմելու համար:
- Եթե կիրառելի է, աստիճանավանդակները բացվել են «վերև» կամ «ներքև» երթևեկության համար՝ աստիճանավանդակների ավելի լավ մաքրմանը զուգահեռ:
- Գրասենյակներում և այլ տարածքներում աշխատատեղերը առանձնացված են առնվազն 6 ոտնաչափով, և ընդհանուր տարածքները ձևափոխված են՝ աշխատողների հավաքույթները սահմանափակելու համար՝ ապահովելու առնվազն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն:
- Անձանց թիվը պետքարաններում, ընդմիջման սենյակներում և այլ ընդհանուր տարածքներում սահմանափակվում է՝ ֆիզիկական հեռավորություն ապահովելու նպատակով:

Գ. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՄԿՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- HVAC համակարգը գտնվում է լավ, գործող կարգավիճակում: Առավելագույն հնարավորության դեպքում, հավաքույթների ընթացքում, դռների և պատուհանների բացման միջոցով օդափոխությունը կբարելավվի:
- Ցանկալի է տեղադրել բարձր արդյունավետության շարժական օդային գոտիչներ, արդիականացնել շինության օդային ֆիլտրները և կատարել այլ փոփոխություններ՝ մեծացնելու գրասենյակներում և այլ տարածքներում արտաքին օդի քանակը:
- Ձեռքով օգտագործում չպահանջող սարքավորումները տեղադրվում են հնարավորինս ամենուր (ներառյալ սանհանգույցները)՝ վարակի վտանգը նվազեցնելու համար:
- Իրականացվում են ախտանիշների ստուգում՝ նախքան այցելուներին, ներառյալ կրոնական ծառայությունների կամ միջոցառումների համար ժամանող անդամներին կթույլատրվի մուտք գործել հաստատություն: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցի դիտարկում: Այս ստուգումները կարող են կատարվել անհատապես կամ այլընտրանքային եղանակներով, օրինակ՝ առցանց ստուգման համակարգերով կամ հաստատության մուտքի մոտ փակցված նշանների միջոցով, որոնք նշում են, որ այդ ախտանիշներով այցելուները չպետք է տարածք մտնեն:
- Հաստատություն ժամանող այցելուներին հիշեցնում են, որ նրանք հաստատությունում կամ դրա տարածքում գտնվելու ամբողջ ընթացքում դեմքի ծածկոցներ կրեն (բացառությամբ՝ ուտելիս կամ խմելիս, եթե կիրառելի է): Մա վերաբերվում է բոլոր չափահասներին և 2 տարեկան և ավելի մեծ երեխաներին: Միայն այն անձիք, ում բուժաշխատողը հանձնարարել է չկրել դեմքի ծածկոց, ազատվում են այդ պահանջից: Աջակցելու ձեր աշխատակիցների և այլ այցելուների անվտանգությունը, դեմքի ծածկոցներ պետք է տրամադրվի այն այցելուներին, ովքեր ժամանում են առանց դրանց:

- Տեսանելի վայրերում նշանները կիրառվում են այցելուներին հիշեցնելու համար, որ ծառայությունների մատուցման և տոնակատարությունների ժամանակ պահանջվում են դեմքի ծածկոցներ՝ բացառությամբ 2 տարեկանից ցածր երեխաների կամ թուլացած շնչառություն կամ այլ ռիսկային պայմաններ ունեցող անձանց:
- Տեսանելի վայրերում տեղադրված նշանները արգելում են այցելուներին ձեռքսեղմումներից, գրկախառնություններից կամ ողջույնների նմանատիպ տարբերակներից, որոնք վարակի վտանգ են ներկայացնում:
- Եթե աղոթքի գրքեր, գորգեր կամ անմիջական հպման այլ պարագաներ օգտագործվում են ծառայությունների կամ արարողությունների ժամանակ, ապա անհատներին հանձնարարվում է բերել իրենց սեփական իրերը կամ այցելուներին առաջարկվում են մեկանգամյա օգտագործման համար նախատեսված իրեր:
- Բարձրախոսները, տրիբունաները, երաժշտական տրիբունաները, գործիքներն ու ամբիոնների վրա գտնվող այլ իրերը ախտահանվում են դրանց օգտագործման միջև:
- Հաստատությունը դադարեցրել է առաջարկվող ափսեների և նմանատիպ իրերի փոխանցումը: Աջակցությունների հավաքագրման համար օգտագործվում են թվային համակարգեր կամ առանց դիպչելու գումար հավաքագրելու տուփեր կամ այլ սարքեր:
- Կայիֆոռնիայի Հանրային Առողջապահության Վարչությունը հրահանգում է, որ «այնպիսի գործողություններ, ինչպիսիք են երգելը և վանկարկելը չեղարկում են վտանգի նվազեցումը, որին հնարավոր է հասնել վեց ոսոնաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանելով», քանի որ արտաշնչվող կաթիլների միջոցով վարակի փոխանցման մեծացած հավանականություն կա: Այս գործողությունները կարող են ներառվել բացօթյա միջոցառումներում՝ ավելի մեծ ֆիզիկական հեռավորության պայմաններում կամ այլընտրանքային մեթոդներով (օրինակ՝ ինտերնետային հեռարձակում), որոնց դեպքում հավատարմացված անհատ մասնակիցները կատարում են այդ գործողությունները առանձին իրենց տներում: Խնդրում ենք վերանայել թարմացված Նահանգային Արդյունաբերության Ուղեցույցը, Երկրպագության Վայրերի, Կրոնական Ծառայություններ Մատուցողների և Մշակույթային Արարողությունների համար՝ [այստեղ](#)՝
- Ինքնասպասարկման սնունդ և խմիչքներ չեն առաջարկվում:
- Եթե ամեն օր իրականացվում են բազմապիսի ծառայություններ, ապա տրամադրվում են մեկանգամյա օգտագործման նստատեղի ծածկոցներ: Մեկանգամյա օգտագործման կամ լվացվող ծածկոցները նախատեսված են բարձրի համար, որոնք կիրառվում են գետնին նստելու համար: Լվացվող ծածկոցները փոխվում են յուրաքանչյուր օգտագործումից հետո:
- Կրոնական հագուստներն ու սպիտակեղենը լվացվում են յուրաքանչյուր ծառայությունից կամ միջոցառումից հետո՝ հնարավորինս ջրի բարձր ջերմաստիճանի պայմաններում:
- Աշխատատեղերը և ամբողջ հաստատությունը մաքրվում են առնվազն ամեն օր օգտագործման ժամանակ՝ սանհանգույցների ու հաճախակի հպվող տարածքների / իրերի ավելի հաճախ մաքրմանը զուգահեռ:
- Հաստատության տարածքը փակ է պահվում հանրության համար նախապես ծրագրված միջոցառումների անցկացման միջև՝ վարակից խուսափելու համար:
- Միջոցառումների միջև կամ աշխատանքային օրվա ավարտից հետո մաքրման համար պատասխանատու աշխատակիցները վճարվում են այդ պարտականությունների իրականացման վրա ծախսած ժամանակի համար, եթե դրանք իրենց կանոնավոր

աշխատանքի մաս չեն կազմում:

- Պետքարանների ցուցանակները այցելուներին հիշեցնում են ձեռքերը հաճախ 20 վայրկյան տևողությամբ լվանալու մասին:
 - Պետքարանները գործում են և ապահովված են լրացուցիչ օճառով, թղթե սրբիչներով և ձեռքի ախտահանիչ միջոցներով և հաճախակի ախտահանվում են ՇՄՊ (EPA) հաստատված ախտահանիչ միջոցներով՝ արտադրողի ցուցումներին համապատասխան հետևյալ ժամանակացույցով
-
- Ձեռքի ախտահանիչ միջոցները, անձեռոցիկները և աղբարկղերը հասանելի են հանրությանը հաստատության մուտքի մոտ կամ մոտակայքում:
 - Ընտրովի - Նկարագրեք վարակի վերահսկումը խթանող այլ միջոցառումներ

Դ. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

- Այս արձանագրության պատճեն փակցվում է հաստատության բոլոր հանրային մուտքերում:
- Եկեղեցու առցանց հարթակները (կայք, սոցիալական լրատվամիջոցներ և այլն) հստակ տեղեկություններ են տալիս ժամանակացույցի, տեղավորելիության սահմանափակումների, կայանման սահմանափակումների, դեմքի ծածկոցների օգտագործման անհրաժեշտության և վիրտուալ մասնակցության տարբերակների մասին:

Ե. ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԱՉԱՌ ՀԱՄԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Եկեղեցականների ժողովների համար կարևոր նշանակություն ունեցող ծառայություններն առաջնահերթություն են ստացել:
- Այն ծառայությունները, որոնք կարող են առաջարկվել հեռակա տարբերակով, տեղափոխվել են առցանց հարթակ:
- Միջոցներ են ձեռնարկվում ապահովելու համար ծառայությունների և տոնակատարությունների հասանելիությունն այն եկեղեցականների համար, ովքեր ունեն շարժունակության սահմանափակումներ և (կամ) հանրային տարածքներում գտնվում են մեծ ռիսկի ներքո:

Վերևում չընդգրված ցանկացած լրացուցիչ միջոցառում պետք է նշվի առանձին էջերում, որոնք հաստատությունը պետք է կցի այս փաստաթղթին՝

Դուք կարող եք կապ հաստատել հետևյալ անձի հետ այս արձանագրության հետ կապված ցանկացած հարցի կամ մեկնաբանության դեպքում՝

Հաստատության
կոնտակտային
անձի անունը՝ _____

Հեռախոսահամարը՝ _____

Վերջին
վերանայման
ամսաթիվը՝ _____